ծել քաւութիւն և ողորմու-
թիւն, աղախին Աստուծոյ և
մայր. բարձրացի պատիւ քո
ինեւ և ցուցցի փրկութիւն
իմ քեւ:

Եթէ զիս գտցեա՝ տիրա-

մայր, թէ ինձ ողորմեացին՝ սրբուհի, թէ զկորուսեալս շահեացին՝ անարատ, թէ ըզ հարթուցեալս յանձանձեացես՝ երջանիկ, թէ զամաչեցեալս յառաջ մատուսցես՝ բարեշնորհ, թէ յուսահատելոյս ինձ միջնորդեացես՝ միշտ ուրախ կոյս, թէ զմերժեալս ընտանեացուսցես՝ մեծարեալդ Աստուծոյ, թէ յիս ցուցցես զգթածութիւն՝ լուծիչդ անիծից, թէ զծփեալս հաստատեացես՝ հանգիստ, թէ՝ ի խռովութենանց յուզմանց փոխեացես զիս՝ խաղաղարար, թէ վրիպելոյս ինձ հնարաւորեացես՝ գտանել, թէ վանեալ իմ մտցես՝ ի հանդէս՝

մահու նահանջիչ, թէ պատ-
նուէիւնս իմ անուշեսցես՝
քաղցրութիւն, թէ պատժան-
մանն իմ խարոյց քակտեսցես՝
հաշտութիւն, թէ պանծաք-
րութիւնս իմ բարձցես՝ եղծ-
մանը ընդառնիչ, թէ զմահանեալս
մահու փրկեսցես՝ կենդանի
լոյս, թէ զլալեսցս ձայն հատ-
ցես՝ բերկրութիւն, թէ ըզ
խորտակեալս կազդուրեսցես՝
դեղ կենաց, թէ՝ ի կործան-
եալս յիս ակնարկեսցես՝ հոգե-
լից, թէ ողորմութեամբ ինձ
պատահեսցես՝ կտակ նուիր-
եալ։ Օրհնեալդ միայն՝ ի ջըր-
թուեանս անբիծս լեզուաց եւ-
ջանկաց, ահա կամիլ մի կա-

Թին քումդ կուսութեան յան-
ձըն իմ անձրեւեալ՝ կենաց ինձ
զօրէ , մայրդ բարձրելոյ տեա-
ռըն Յիսուսի արարչին երկնի
և քնաւին երկրի , զոր անճա-
ռապէս ծնար բովանդակ մարմ
նավըն և համայն աստուածու-
թեամըն , որ փառաւորեալն է ընդ
հօր և հոգւոյն սրբոյ
էութեամբ և անքննութեամբ
մերոյին բնութեամբս միացե-
լով , ամենայն և յամենայնում ,
մի Աստուածութենէն . նմա
փառք յաւետեանից յաւիտեա-
նըս . ամէն ։

ՍԱԼՕԹՔ ԱՒՐԴԻՆ ԱՍՏՈՒԾՈՅ

Ի ԲԱՆԻՑ

ՅՈՎՀԱՆՆՈՒ ԳԱՒՌՆԵՑԻՈՑՆ

ՅԱՍՏԻՃ ամենաղօր լուսո-
ւորայն երկնից, և ճարտարա-
պետ ամենիմաստ տանս աշ-
խարհի, որ յայսմ աւուր կար-
գեցեր զլուսաւորսն ի հաս-
տատութեան երկնից՝ զարե-
գակն և զլուսին և զաստեղա-
ցըն պարս՝ ի նշանս և ի ժա-
մանակս և յաւուրս և ի տա-
րիս։

Ընդ աղաչեմ զքեզ Այա-
ւաճ կենարար՝ հաճոյական
պարգեւօք հոգեձիր շնորհայ

քոց շարժեա զմիտս և զկամս
իմ սիրել զքեզ յամենայն սրտ-
ոէ, և ուղեա զընթացս ան-
ձին իմոյ անհերքելի զօրութէ
քամբ՝ գնալ անխոտոր ի ճանա-
պարհս հրամանաց քոց: Կապ-
եալ կամ անզերծ շղթայիւք
յանցանաց իմոց, ազատեա
զիս ամենակար: Ընկեալ դան-
դա չեմ ի հաղթս կորստեան
գաղանի որսողին, հան զիս
բարեգութ: Ի բանտ անեղա-
նելի խաւարին գործոց կաշ-
կանդեալ տանջիմ, ծագեա ա-
ռիս զոյս շնորհիդ, և զերծո
զիս խնամակալ՝ յաղաւոութիւն
կենաց անվախճանից:
Դու ես յոյս իմ և ապաւէն

նուէիւն և դու իմ փրկուէի. քեզ ակնկալեալ սպասէ ամե- նամեզ անձն իմ։ Կեզ փափա- գի հոգի իմ մարդասէր, որ- պէս փափագի եղջերու յաղ- բերս ջուրց։

Ցարաւի եմ ողորմութե քում՝ արբո զիս, տանջեալ ի սուկ՝ յեղջերացդ խոզից կե- րակրիմ՝ զհացդ երկնաւոր ջամ- բեա ինձ։ Ընդ դառնութե մեղաց և մահու արբեալ տագ- նապիմ չարաչար, զբաժակդ կենաց մատուսակեա ինձ։ Ներկացեալ դողամ յանապա- րոյն աւազակաց իշխանին մա- հու, զդեստուք խնամոց քոց ծածկեա զիս։ Վիրաւորեցեալ

եմ՝ ի թիւնաւոր նետից անե-
րեւոյթ թշնամւոյն, թժշկեա
զհարուածս իմ: Նա արա զիս
զգաստախոհս ծառայս, որ
կարդամ առ քեզ՝ արժանաւոր
երկնային հարանարանին և ան-
մահական սեղանոյն՝ ընդ այնո-
սիկ ոյք սիրեցին զքեզ՝ ի բո-
լոր սրտէ, և պահեցին զպատ-
ուիրանս քո, զի ընդ նոսին
փառաւորեցից զամենագութ
մարդասիրութիւն քո յաւի-
տեանս յաւիտենից:

Ընկալ տէր զաղաչանս մեր
բարեխօսութեամբ սրբուհւոյ
Աստուածածնին անարատ ձր-

նողի միածնի որդւոյ քո, և ա-
ղաչանօք ամենայն սրբոց և
աւուրս ընդհիւ : Լ ուր մեզ
տէր և ողորմեացն երեսաքաւեա
և թող զմեղս մեր : Երժանա-
ւորեա գոհութեամբ փառա-
ւորել զքեզ ընդ հօր և ընդ
սրբոյ հոգւոյդ . ամէն :
Հայր մեր որ յերկինս . եր 1 :
Օրհնեցից զտէր յամենայն
ժամ, յամենայն ժամ օրհնու-
թիւն նորա ՚ի բերան իմ :

ՏՈՒՆԳՀԱԲԹԻ ԱՒՈՒՐ

ԱՌԱՒԵԼՈՅ

Հայր մեր որ յերկինս. եր 1։
Տէր ելոյ զչարութիւնս. եր 2։
Լ՚ցայք առաւօտուս զմ. եր 3։

Աչք տեառն ի վերայ արդարոց եւ ականջք նորա ի վերայ աղօթից նոցա։

ՍԱՂՄՈՍ ԱՊԱՀԽԱՐՈՒԹԵԱՆ

Մտցեն աղօթք իմ առաջի քո տէր, խոնարհեացի ունկն քո ի խնդրուածս իմ։

Տէր լու՛ր աղօթից իմոց, աղաչակ իմ առ քեզ եկեսցէ, և մի

դարձուցաներ զերեսս քո յինէն ։

Յաւուր նեղութեան իմոյ խոնարհեցո առ իս զականկն քո , յորում աւուր կարդամ առ քեզ վաղվաղակի լսեր ինձ ։

Սպառեցան որպէս ծուխ աւուրք իմ և ոսկերք իմ որպէս խոտ չորացան ։

Ջարայ ես որպէս խոտ և ցամաքեցաւ սիրտ իմ , մոռացայ ուտել զհաց իմ ’ի ձայնէ հեծութեան իմոյ ։

Կպեցաւ ոսկր իմ ’ի մարմին իմ . նմանեցայ ես հաւալսան անապատի ։

Եղէ ես որպէս բու յաւերակի , տքնեցայ և եղէ ես որպէս

ձնձղուկ միայն ի տանիս :
Օ մախիր որպէս զհաց կերբի , և
զմանել լին իմ արտասուօք խառ-
նեցի :
Յերեսաց բարկութեան սըրտ-
մտութեանդ , զի դու բարձ-
րացուցեր և խոնարհեցուցեր
զիս :
Աւուրք իմ որպէս հովանի ան-
ցին , և ես որպէս խոտ ցա-
մաքեցայ :
Դու սէր յաւիտեան կաս , և
յիշատակ քո ազգէ մինչեւ
յազգ :
Դու յարուցեալ գրասցիս ի
վերայ սիօնի , ժամանակ գը-
թալոյ նորա հասեալ է ժամ :
Սպասեցին աչք իմ փրկութե

քում տէր և բանից արդարու-
թեան քոյ ։
Ըրա ընդ ծառայի քում տէր
ըստ ողորմութեան քում, զար-
դարութիւնս քո ուստ ինձ ։
Ծառայ քո եմ ես իմաստուն
արա զիս, և ծանեայց զվկայու-
թիւնս քո ։
Նայեա առ իս և ողորմեա ինձ
ըստ իրաւունս սիրողաց անո-
ւան քո ։
Ճանապարհս իմ ուղիղ արա
ինձ ըստ բանի քում, և մի տի-
րեսցեն ինձ ամենայն մեղք ։
Զայնի իմում լուր տէր՝ ըստ ո-
ղորմութեան քում և յիրաւ-
ունս քո կեցո զիս ։
Փրկութիւնք քո բազում են

տէր , ըստ իրաւանց քոց կեցո
զիս ։

ՀԱՐԱԿԱՆ ԱՊԱՀԽԱՐՈՒԹԵԱՆ

ՈՂՈՐՄԵԱ ինձ քրիստոս ո-
զորմեալ Թեամբդ քո մեծաւ , զի
կարօտ եմ ես չնորհի քո և ո-
զորմելոյ Թեանդ , ողորմեա և
լու ր ինձ քաղմամեղիս ։ Լու ր
տէր ձայնի աղաւնոյս և ցա-
ւագին պոռալոյս , որ ա-
մօԹով կամ տապլի քո՝ իմ չա-
րաչար վարուք , ողորմեա և
լու ր ինձ քաղմամեղիս ։ Ընկալ
տէր զաղաչանս իմ , և զհատա-
չանս արտի իմոյ , որ աղաղա-

կեմ որպէս կինն քանանացի, ո-
ղորմեա և լուր ինձ բազմամե-
ղիս ։

Բրիտոս ասուած յոյս
ապաշխարողաց՝ չնորհեա ըզ
թողութիւն բազում յանցա-
նաց իմոց ։ Ա՛ր քեզ բազմա-
պատիկ ապաւինեալ կարդամ,
մի մերժեր զիս յողորմութե-
նէ քումմէ ։ Արպէս զաւազակին
ազաղակեմ առ քեզ, յիշեա
և զիս տէր ի քում յարքայու-
թեանդ ։

Տէր, որ ի միջ լերինն աղ
բերացուցեր զջուրն ի վիմէն ։
Տէր, ի սրտէ խմիմ հան ինձ

արտասուս ապաշխարութեանէ ։
Օ՛ի կէցից և ապաշխարութէ
ապրեցայց ՚ի հանդերձեալ
քոց դատաստանաց ։

ՄԱՂԹԱՆՔ ԱՌ ՍՈՒՐԲ ԱՒԱՓԵԱԼՍ

Եթէ ումեք թոցուցուք ցմեցա՝ թոցեալ
չիցի նոցա . եթէ ցուրուք ունիցիք՝ կալ-
եալ չիցի ։ Ջի ես ընդ ձեց եմ ցամենայն
աւուրս մինչեւ ի կատարած աշխարհի ։

ՅՇԽԱՐՀԱԿԻՐ բանին բազ-
կաց եղեալ հիմունք սրբոյն
սիմէնի . լերինք անշարժք հո-
վիտք ծաղկածինք , հարազատք
վէմք հաւատոյ պետրոս և անդ-
րէաս բարեխօս լերուք առ տէր
վասն անձանց մերոց ։

Ի բարեբուն հոգւոյն վըտակք և որոմնուն՝ք սիեզեր-
ցաց, ցոլմունք հրեղէնք աս-
տեղք լուսափայլք, յիսուս
Թագաւորին վակաս լանջաց
սուրբ յովհաննէս և յակո-
բոս. բարեխօս լերուք առ
տէր վան անձանց մերոց:

Հայրապետական այդոյն հր-
բեղէն պարիսպք և բարձր աշ-
տարակք, ոսկեղէն բաժակք և
ժիր մատուռակք. հայաստան-
եայց հայր հոգեւոր բարդու-
ղիմէոս և Թադէոս. բարեխօս
լերուք առ տէր վան անձանց
մերոց:

Հրեշտակական հօտին ան-
մահ արօտք և ջուրք հանդըս-

աեան . հակօղ հալիւք խաւա-
րահալած՝ բանաւոր փարախ
սուրբդ Թուխման և փիլիպպոս
բարեխօս լերուք առ տէր վա-
սըն անձանց մերոց :

Ի մաքրափորձ հոգւոյն ա-
նօթք ընտրեալ և ձիւնափայլ.
Թագաւորք երկրի իշխանք աշ-
խարհի . անպակաս դանձուց
բաշխօղ յակոբ ալփեան ,
յուդա յակոբեան . բարե-
խօս լերուք առ տէր վասն ան-
ձանց մերոց :

Նրեքտրեան մի տէրութե
խորհուրդ կամաց և հաղարա-
պետք , փողոց հնչմունք բար-
բառք աւետեաց . ընդ ամե-
նայն երկիր սուրբդ շնաւօն

և մատաթիա . բարեխօս լեր ու-
առ տէր վասն անձանց մերոց :

Յանին կենաց կանուխ քա-
րոզ և աւետարանիչ, երջ փըր-
կութեան հնչումն ահաւոր ,
ազգի մարդկան պարծանք ՝ըդ-
մատաթէոս . բարեխօս լեր
առ տէր վասն անձանց մերոց :
Ընձառեալ դրախտին աստէն
տեսող և երկրորդ երկնից . նը-
կատող բարձանց խորոց բա-
նալի . երեքտասան տուրք ա-
ռաքեալ պօղոս հայր համատա-
րած . բարեխօս լեր առ
տէր վասն անձանց մերոց :

ԲԱՆ ՁԲ։

Տէր Աստուած բարերար, բազմապարգեւ Թագաւոր, կենաց պատմպարան, լուսոյ կերպարան, լայնատարած հանդ. գստարան. որ յաղագս մե. ղուցելոյս եկեալ մարմնացար. գոծեցեր զանպատուումն և հանդերձեցեր զհրաշալիսն, մինչեւ կատարեցեր զառեցեալն ընդ ամենայնիւր աստուածութեանդ։

Ընդ վանն առաքելոյն սըրբոյ յերկնատեղծ քո ձեռացըդ ձեռնադրելոց և հոգւովըդ սրբով օծելոց, զորոց ըղ

գոլեան արժանաւորութեան
ըստ իմում կարի՝ առ ի փառս
քո, սէր ամենայնի, յայլում
բանի պաշտեցի, և ինձ ոչըն
ձեռին յիշատակաւ սիրոյ նո-
ցին ընտրեաց: Եւ ինձ ե-
կեալ նոքօք հանդերձեսցես յե-
րանութիւնն փափաքելի. ձայն
բարի հովուութեան նոցին ի
յոլքայն ինձ կենաց քաղցր լս-
ելի: Վասն կալայց ի յանեղ
ծուխն վրկութեան ոսնեց-
եալ յուսոյն՝ ընդ առաքնոր-
դացն կենաց, սկզբնաշնորհիցն
պատուոյս, փառաւորեալն դա-
սուց, գեղոցն բանականաց,
աւետարանչացն բարձանց, ի-
խանացն պանծալեաց, լուսա-

պայծառ Թադիւ պճնելոյն, ի զարդ անկասուս զօրութեան հնարին պայծառացելոյ, իւղովն զուարթութեան տիրական լուսոյն կատարելոյ։

Ընդ աշակերտաց մեծիդ հրամանի բարձրեալդ առաջնոյ Քրիստոսի՝ և մարմնիրատացըն ընտրելոց նահատակութեամբ, որք մահացու և վըշտաչարչարն մարմնով, վտանգաւոր և ամենակիրն անդամօք, երկրաւորական և հողանդուածն բնութեամբ մարտուցեալ ընդ տարր գոյից ամենայն նիւթից՝ պսակեցան բարձրացան և կենդանացան հոգեպէս. արիաբար եղեալք

'ի յերկրէ, ըստ մարգարէին, վկայք ճշմարիտք ամենափորձն մահու, իմանալեացն անտեսիցըն և ծածկելոց աներկբայ բարեացն յուսով առնելոցն աստէն նկատիչք, աշակերտք առաքելոցն և քարչարակից. քնոցին. որ հաւատարեալ դորձոյ ընդ նոսին, կատարեալ լսմամբ անպակասելեաւ պարեն 'ի խրախճանս անկէտն երանութեան. որոց հաճոյական և ընդունական մաղթանօք, արիւնընծայ վաստակաւորէր քրտնակնդրուկ աղերսին յարդմամբ՝ ընկալելիս նորոգ ըստ նոցին մասին անեղծ վրկութեամբ 'ի քեզ արձանա-

ցեալ։

Ընդ խաղաց եալսն հուրբ և սուսերբ արեամբ ներկեալ ցըն և ձգնաւորացն սքեց հարցըն միանձանց և քեզ հետեւեալոցն, որդի աստուածոյ, անպարտելի քաջութեամբ և անպատիր զգաստութեամբ, ընդ դժնեայ գոռոզի մարմնոյս բըռնութեան արիապէս մարտուցեալ, սակայն վանեցին զանմարմինն Եղելիար. և մշտամարտ հանդիսիւ յաստպարիսի կենցաղոյս առանց զգուանաց ծանրաբեռնութեան՝ ի լայնածաւալ ծփանաց աշխարհիս ծովու տապանակաւ մարմնոյս թանձրութեան զթեթեւութիւն հոգ-

ասոյն Թուղեալ՝ ի նաւահան-
գիստն կենաց հասին. և իբր
սիրտք վերնուն վիճակին ա-
ռանց յետնոցն մոռանալ եան,
զիարդն յաղթութեան համար-
ձակապէս պայծառ ձոխութիք
պճնեալ իսկապէս՝ ի գլուխ կա-
պեցին. վասն նոցին արժանա-
ւոր մաղթանաց և նուիրական
հայցուածոց և զիս զմեղաւո-
րըս՝ ի պատժականաց ընկալ
ընդ նոսին։

Եւ ահա խառնեալ զանմա-
քուրս բան ընդ նախադրեալ
երջանկացն վարուցականաց ա-
ղերսարկութիւն, որ վասն իմ
գոչեն քեզ՝ ի հաճութիւն, և
ես ընդ նոսին իբր դառնուկ

եղեալ ընդ քաղցու, կամ տա-
սանկ ընդ ողորկութեան, սը-
պեղութիւն ընդ վայելչութե և
տիղմ ընդ պեղեցկութեան
մարգարտի, կամ հող ընդ յըս-
տակութե ոսկւոյ, և կամ քարի-
նըս անարուս ընդ պայծառու-
թեան արծաթոյ, բայտասու-
ընդ ճշմարտութեան, կամ ա-
սաղինչ առաքինատու ընդ կա-
ղութեան զանգուածոյ հացի.
արդ լաւ, հզօր, հնարաւոր,
գոլեալ, ընդոյն վասն իմ և
զնա ընդ նոսին 'ի նոցին գո-
վեստ, 'ի փրկութիւն իմ և 'ի
փառս քո, ամենակալ, բա-
րեբար, օրհնեալ, երկայնա-
միտ, կարօղ, անքնին, անճառ,

անելջ և անաւելջ : Որո են պարզեւք, քո են ընտիք. դու ակիզբն և պատճառ բարեաց ամենայնի, Ոչ ես դատապարտիչ, այլ ազատիչ. ոչ ես կորուսիչ, այլ գտիչ. ոչ ես մահացուցիչ, այլ կեցուցիչ. ոչ ես տարապրիչ, այլ ժողովիչ. ոչ ես մատնիչ, այլ ապրեցուցիչ ոչ ես ընկղմիչ, այլ վերացիչ. ոչ ես գերիչ, այլ կանդնիչ. ոչ ես անիծիչ, այլ օրհնիչ. ոչ ես վհատուս, այլ ընտրիչ. ոչ ես Թշուառացուցիչ, այլ միխիթարիչ : Ոչ եղծանես, այլ գրես. ոչ ապականես, այլ հաստատես. ոչ ոսն հարկանես, այլ ախտ փես. ոչ պատճառս յօդես մա-

հու, այլ հնարս խնդրես կե-
նաց. ոչ ես ի կամս շարժեալ
սատակման, այլ ի փրկութիւն
ողորմութեան: Ոչ մատանա
ջայրելութիւն, ոչ լքանես զլ
բարի, ոչ արգելուս պիղծու-
թիւն, ոչ բերես վէմս կորըս-
տեան, այլ կտակ ապաշխ:
Ոչ թշնամանիս յատաստեց,
ոչ բամբասիս ի ընտիցդ, ոչ
հայհոյիս ի պարկեշտից, ոչնա-
խատիս ի ձրի ձրից, ոչ անպա-
տիս յերկայնամտութեց, ոչ եպե-
րիս ի ներողութեանդ, ոչ բան-
սարկիս ի բարութեանդ, ոչան-
պատուիս ի քաղցրութեանդ,
ոչ քամահիս ի հեզութեանդ,
ոչ առաքին այսոցիկ տրտընջ

մունք, այլ անլուելի գոհաբա-
նութիւնք: Խարճ զմեզս իմ,
հզօր. լոյծ զանէծս իմ, օրհ-
նեալ քաւեա զպարտիս իմ, ո-
զորմած. ընկեա զյանցանս իմ,
գթած. մատո մասն այցելու-
թեան, և անդաւին իսկ կա-
տարեցայց. զի՞նչ քեզ, տէր,
քան զսուին դիւրապոյն, և
կամ զի՞նչ ինձ պարտաւորիս
կարեւորապոյն: Այլ կենդա-
նագրեա, բարեխնամ, քոյին
աւտեղծ պատկերիս վիշտն
կրկին՝ ի շունչ նորոգման լու-
սաւորութեան մաքրական շնորհն
զամենամեղս ոգի պաշտպան-
եալ:

Ո՛ ածեր, ողորմած, ինձ

որ տարաժամ ՚ի համառօտս
երթի՝ անթոյլատ տալաճեռնու-
թեամբ ընդ անկատար ուղին
հետեւել, մի մտաւոյաներ
բաժակ դառնութեան ՚ի ժամ
ծարաւոս. մի փակեր, գթած,
իմ հանդէպ զյաչողուած հո-
գեւոր օգտիս, և մի երբ յան-
կարծ ադէպ հինից տապատակ
դիշեր մահուն ինձ պատահե-
ցէ, մի տապ տօթոյն յանապատ
քաստ պահուն զարմատս հատ-
եալ ցամաքեցուսցէ, և մի լաս-
նական դիպուածք հասեալ
գաղանեօք միսասեցեն, միտա-
հեցի ինձ առն մեղայս, և մի
հոսանք ուղխից կենցաղոյս զիս
տրոշեսցեն: Մի հանդիսան

մահ բերիցէ, և մի ննջումն
ի սատակումն յառաջեսցէ.
մի քունն ինձ կորուստ լիցի,
և մի նիրհումն ապականու-
թիւն գործեսցէ. մի վախճանն ան-
յարմար ի վերայ իմ արշաւե-
ցէ, և մի հնչոյս վերարձակու-
թիւն ըմբռնեալ ի խոնարհ
լիցի:

Դու ես տէր, դու դթած,
դու բարերար, դու երկայնա-
միտ, դու ամենակարող, ա-
մենայն բան անհատութեան
անճառ գործաւոր, քաւել փըր-
կել կենդանարծել լուսաւորել,
վերանին հատուցանել, ի ժան-
եաց կերչաց դազանաց և կամ
յառամանց վիշապաց ի կեան

կարգել, ’ի խորոց անդնդոց ’ի լայս բերկրութեան ածել, և ’ի հեղձմանէ ծփանաց մեղաց ընդ արդարս երջանկաց փա- ռօք բազմեցուցանել : Ընդ- նայն ոգի քեզ աւնկալեալ յու- սով ըսպասէ, կարօտեալ քու- մըդ հնարհայ, եթէ երկնայինք և եթէ երկրաւորք, եթէ ան- կածն մեղօք և եթէ ամբարձ- եալն արդարութեամբ, եթէ տէր և եթէ ծառայ, եթէ տիկին և եթէ աղախին, և ’ի ձեռին քո է շունչ կենդանա- կան բոլորեցուն : Ու քեզ ընդ հօր և հոգւոյդ սրբոյ փառք յաւիտեան յաւիտենից.

ամէն :

ԸՂՕԹՔ

ԱՒ ՈՐԴԻՆ ԱՍՏՈՒԱԾ

Ի ԲԱՆԻՑ

ՅՈՎՀԱՆՆՈՒ ԳԱՒԱՌԵՑԻՈՑՆ

Ի՛ր արարչական պ֊թով կեն֊
դանածնեաս զարարածս քո և
խնամեաս քաղցրութեամբ՝ աս֊
տուած իմ և տէր, որ յայսմ
աւուր ամենազօր հրամանաւ
քով հաներ ի ջուրց զեռուն
ընչից կենդանեաց, և զկետս
մեծամեծս, և զթռչուն թե֊
ւաւորս, և աստուածային օրհ֊
նութեամբ քով օրհնեցեր զդ
նոսա աճիլ և բազմանալ ի վե֊

քայ երկրի ։

Ընդ՝ աղաչեմ զանխոնջ-
լել տերութիւն քարեբարու-
թեան քո, օրհնեա և զիս զըս-
տեղծուածս ամենակալ ձեռին
քո ծննդաբեր լինել գործոց
առաքինութեան ։ Եւ զսերմն
հոգևոր կենաց՝ զոր անդստին
բնաւորեալ ես՛ի խորս մտաց
իմոյ՝ զօրացո զիս աճեցուցա-
նել կենսաբեր խորհրդով՛ի
ձեռն շնորհաց և ողորմութե
քո, զոր տաս ամենայնի և ոչ
նախատես. զի դու նոյն ես,
և ամք քո ոչ պակասին. քա-
նաս զձեռն քո՝ և լցուցանես
զկետս և զկարիս ամենեցուն
յանապատ գանձուց քոց ։ Ա-

Թողուր զիս տէր իմ՝ ամուլ և անբեր գործոց բարութեան. մի՛ անտես առներ զտաւտալեալս ի քոց խնամոց: Խոնարհեցո զունկն քո և լուր ինձ, զի աղքատացայ ի բարեաց. ստուգանեցի կենաբար պատուիրանաց քոց և յօժարեցայ հաճել կամս անձին իմոյ:

. . . Ընդ քեզ աղաղակեմ՝ի խորոց անդնդոց յոր ընկղմեալ եմ, որպէս Յովնան՝ի փորոյ կիտին. հան զիս՝ի վէտ խաւարի, վերաբերեալ՝ի լոյս կենդանդ յաւիտենից: Խորասուզեալ եմ յանդունդս մեղաց կորըսեան, մատո զաջդ ամե-

նաղօր և փրկեա զիս : Տանջեմ
հանապազ ՚ի խղճէ մեռց՝ զի
դառնացուցի զքաղցրապուղ
տէրդ իմ. և յոյզք վարանե-
լեան խորհրդոց աննեըելի տան-
ջանաց՝ որ պատրաստեալ եմ
նայ ինձ , իբրև լեռնացեալ ա-
մեհի ալեօք հոգմակոծեն զան-
ձըն իմ, բարեբար և անոխա-
կալ՝ հզօր այցելու օգնեա ինձ ,
և հանդարտեցո զմրրիկեալ ա-
լիս խառնուածեան մտացս յօ-
դուած դէպ ուղեան քո :

Խաղաղութիւն անօրէնութ
իմոյ՝ որպէս հեղեղք պղտորե-
ալք գարնանապայր գետոց ա-
ղտեցին զմեղսուցեալս , այլ դա-
մարտասէր՝ ընչեաց զհոգին քոյ

յրուեթեան կամաց քոց, և ցա-
մաքեցո զհոսանս չարեաց իմոց,
և ողորմութեամբ քովքաւեա
զանօրէնութիւնս իմ, և թող-
ակից արա սիրելեաց անուա-
նդդ քոմ սրբոց, զի ընդ նո-
սին փառաւորեցից զանոխա-
կալ մարդասիրութիւն քո, այ-
ժմ և միշտ և յաւիտեանից յա-
ւիտեանս ամէն։

ԱՂՕԹՔ

Ո՛ ընտրեցեր և ընկալար
զերանելի առաքեալս Քրիստոս
առաջաւ մեր, և հաղորդս
արարեր զնոսա կամաւոր չար-
չարանաց քոց։ Ընդ քեզեաս

առ քեզ ունիմք որք առատ և ընդ ամենայն տիեզերս տուրք եղեն : Արդէս զի աղօթիւքն նոցա և բարեխօսութեամբ խաղաղացուսցես զկենցաղաւարութիւնս մեր . փրկեալ յեղբևելի և յաներևոյթ թշնամէն : Ընդհեա մեզ տէր լսել օրինակի նոցին կեալ , և զվախճանն մեր կնքեա ուղղափառ խոստովանութե՛ի յոյն կենաց յաւիտենից , զի և մեք արժանի եղիցուք մնանել յերկնային խորանն լուսոյ , և ժառանգել զպատրաստեալն ի լինելոյ աշխարհի սրբոց . քոց գթութեամբ , և ընդ նոսին գոհանալով փառ աւրհնութե-

զբեզբնդ հօր և բնդ արբոյ հոգ-
ւոյդ այժմ և միշտ և յաւիտ-
եանս յաւիտենից . ամէն :

Ինդ ամենայն երկիր երգեսցէ
քաւ նոցա և մինչև ի ծագս աշ-
խարհի են խօսք նոցա :

ՈՒՐՖԱԹ ԱՒՈՒՐ

ԽԱՉՒ

Հայր մեր որ յերկինս. եր 1։
Տէր եթէ կշռիցուն. եր 2։
Լ՚ցաք առաւօտս ողորմութենէդ. եր 3։

Եռաւր երկիւղածաց քոց նշան, զի ապրեացին յերեսաց պղեցման։

ՍԱՂՄՈՍ ԱՊԱՇԽԱՐՈՒԹԵԱՆ

Որպես սիրեշիք են յարկք քո սէր զօրութեանց, ցանկայ եւ փափագի անձն իմ ի գաւիթս քո։

Ի խորոց կարդ այլ առ քեզ աղեր տէր լուր ձայնի խնդուածոյ։

Եղեցին ականջք քո՝ ի լսել ձայն աղօթից իմոց։

Թէ զանօրէնութիւնս իմ քննես տէր տէր, իսկ ո՛ կարէ կալ առաջի քո, զի՝ ի քէն է քաւութիւն։

Վասն անուան քո հասպեսի տէր, հասպեսի անձն իմ բանի քում, յուսացաւ անձն իմ՝ի տէր։

՚Ի պահէ առաւօտու մինչեւ յերեկոյ, ի պահէ առաւօտու յուսացաւ Իսրայէլ՚ի տէր։

՚Ի տեառնէ է ողորմութի՛ւն քաղում, և՝ ի նմանէ է փրկութի՛ւն, և նա փրկեսցէ զԻսրայէլ յամենայն նեղութեանց նորա։

Տէր ո՛վ կացցէ՝ ի խորանի քում,

կամ ով բնակեցի ՚ի լեառն
սուրբ քո ։

Որ գնայ անբիծ գործէ զար-
դարութիւն խօսի զճշմարտու-
թիւն ՚ի լեզուի իւրում ։

Որ ոչ նենգաւորեաց լեզուա
իւրով և չար ընկերի իւրում
ոչ արար ։

Նա ՚ի քեզ տէր յուսացայ և
դու լուիցես՝ ինձ տէր աստ-
ուած իմ ։

Բանից իմոց ունկն դիր տէր
և ՚ի միտս առ զաղաղակ իմ ։

Լայեա ՚ի ձայն աղօթից իմոց,
թագաւոր իմ և աստուած
իմ ։

Որպէս փրկեցան սիրելիք քո՝
կեցո զքեզ քով և լուր մեզ ։

Խաղաղ եմ քո գթութիւնէդ բազմամեղ անձին իմոյ, որովհետեւ աստուած քաւիչ իմ է։ Ո՛վ քեզ անիշաչար տէր մեղայ չարին խաբմամբ, որովհետեւ աստուած քաւիչ իմ է։ Ի քո միանգամ գալստեանն յորժամ գան դատել զերկիր, որովհետեւ աստուած քաւիչ իմ է։

Ո՛ւրախութեամբ դողացաւ ամենամեղ անձն իմ յահեղ քոյ դատաստանաց յանդիմանելի ատենէն։ Վասն զի կամաւ մերձեցայ ի մեղս մեծամեծս, այդ կայ և ինձ անդիմելի պա-

տուհան : Ընդ անկեալ ազա-
չեմ փրկիչ և բարերար , խնայ-
եա յիս՝ի մեղուցեալս , և ո-
ղորմեա ինձ բազմամեղիս :

Ամենակալ քաւեա զմեզ իմ,
զի աստուած ես ապաշխարո-
ղաց : Եւ զհոգիդ սուրբ մի
հաներ յինէն , զի աստուած
ես ապաշխարողաց : Եւ փրկե-
եա զիս յահապին հրոյն , զի աս-
տուած ես ապաշխարողաց :

ԱՒ ԿԵՆՍԱՏՈՒ ՍՈՒՐԲ ԽԱՉՆ

ՅԻՍՈՒՍԻ

Ելյ ինձ քաւ լնցի պարծիլ, բայց միայն ի խաչ տեառն մե- ր յ Յիսուսի քրիստոսի ։

Օ՜, օրութիւն սուրբ խաչի քո քրիստոս որ կանգնեցեր ի վերս կութիւն աշխարհի սա պահես- ցե զմեզ յամէնայն փորձու- թիւնէ ։

Բանզի ի սմա բարձրացար սա- տուած . և ի սմա հեղեր զ պատուական սուրբ զարիւնդ սա պահեսցե զմեզ յամենայն

փորձութեանէ ։

Ու զքո միւսանգամ գալուստդ ազատութիւդ նշանաւ խաչի քո ցուցեր աշխարհի, աս պահեցէ զմեզ յամենայն փորձութենէ ։

Գաւազան զօրութեան զխաչ քո եաւր մեզ քրիստոս, և սուրբ յաղթեցուք անօրէն թշնամւոյն ։

Սա է զէն յաղթութեան սըրեալ արեամբ որդւոյն աստուծոյ, և սուրբ յաղթեցուք անօրէն թշնամւոյն ։

Սա է աթոռ տէրունեան և զի սմա է բազմեալ քրիստոս որդին աստուծոյ, և սուրբ յաղթեցուք անօրէն թշնամ

ւոյն ։

Սա է սեղան արբուքեան և ի սմա է պատարագեալ Քրիստոս գառն աստուծոյ և սուրբ յաղթեացուք անօրէն թշնամւոյն ։

Սա է կարասիս յաւուր գալստեան փրկչին և պահակ պարծանաց հաւատացելոց, և սուրբ յաղթեացուք անօրէն թշնամւոյն ։

Ընդ այսու կարգ անիցէ լինի խորհրդոյն ընդունարան ամենայն սուրբ քահանայից, ի սաւանաձեւ ծածկոյթ ծածկեալ, քեզ երկիւղածեմ յոդ-

նութիւն ինձ ժամանեա՛ի յեղ-
ցս և՛ի մուտս ։
Ի յերկրէ երկինք և՛ի յերկինս
մեղ անբարբառ բարեխօս ում
սուրբ քառաթև՛ի յահաւոր
և՛ի հրայոյտ փայլմանն կա-
րասես դալով և նախատուշակ
դալստեան որդւոյն աստուծոյ՝
քեզ երկիրպագեմ յօդնութի
ինձ ժամանեա՛ի յելս և՛ի
մուտս ։
Յորժամ յարևելից փայլես
անձառ լուսով՝ լուսաւորե
պհաւաստացեալսն, և դառա-
պարտես զապիկն հրէից անհա-
ւատից ում սուրբ քառաթև,
և վիս լուսաւորեա զհաւատա-
ցեալս մեզօք, և դասակարդեա

՚ի դաս մատենագրի յանձատ
երկնից արքայութիւնդ, զի ան-
դադար օրհնաբանիս, և քո
են փառք յաւիտեանս.
ամէն։

Ստեղնեալ ծառայն մահա-
բերին այն որ բուսաւ ՚ի մէջ
դրախտին փոխան բարձեր զգ
փայտ խաչին, ՚ի դողգոթա հա-
ներ տեղին. զիմ առ ՚ի մեզս
անկեալ զոգի և ծանրագոյն
բարձեալ բեռին, բարձ ՚ի
յուսոյդ ըստ ոչխարին հան ՚ի
յերկինս ուխտեալ տեղին։

Ի խորոց սրտից խօսք ընդ առաւծոյ։

ԲԱՆ ԼԶ։

Ո՛վ քանզի անթիւ են յա-
ճախեցեալ, և զերծանցու-
թեամբ միշտ առաւելեալ
վրկանաւորդ արդասիք շնոր-
հաց աւ պարտուցս իմոց ա-
ռաւելութիւն, չարչարանացդ
հանդէս և յանձնառութիւն։
Ո՛վ ամենիմաստ ամենից հոգ-
ւոց գոյից արարիչ՝ ի գործա-
րանի մահուն նշանի խաչին
հեղուսեր, զի զձեռնարձա-
կութիւնն իմ ընդդիմութեան
կամաց քոց լեցես։ Ո՛վ ընթա-
յուլականդ լծակցութիւն եր-

կոցունց ասիցդ կեցուցողաց՝ յանապզելուես պատճառ՝ ի պատժարանի փայտին մածուցեր, զի զիահատուցեալս վայրապտութիւն թշուառացելոյ դրաւականեացես գթածարար։

Ա՛ պօտնալ ձեռաց կուիւղացն հրամայեցեր օրհնեալ պապաթանդ, որ զիզենոյն տուն առ ժամայն չորացուցեր, զի և զառ իս ներելոյդ օրինակ կանխաւ առեստրանեացես։ Ա՛ գանողացն ապիրատութեան զհատատելանեալդ աստուած ապառնացար, որ զարուսեակն մըթացուցեր, զի մահացելոյս անձին բարուն

հանդստեամբ հանդերձ գոր-
ծեացես : Ա՛ղ ղհայհոյչացն հր-
նարաւոր չարաբանուի կապ-
տեցեր , որ ղլուանին պատկեր
երանգաւ արեան գունեցեր .
ղի զանհամարձակ լեզուս ՚ի
գովեստ քեղ զօրացուացես :
Ա՛ղ նախատողացն մղեգնու-
թեան սատեցեր , որ զտարբ-
րըս սատանեցեր , ղի զիշուա-
ռացեալս գլուխ գխռուեղ օձ-
մամբ խռչեացես : Ա՛ ՚ի մոլ-
բեցուցչին կարդալ զքեղ ա-
տուածատանիցն՝ զօդուած
ճնօտիցն բաժանեցեր քակ-
տեալ ՚ի միմեանց , որ զկալ-
ծրուքիւն վիմացն հերձեր , ղի
զանուանակս բարեաց հոգիս՝ ՚ի

քերմանէ ընդունայնութեան
ողորմութեամբ հանդարտե-
ցուսցես : Ա՛ղ զպահապանացն
սուրս ընդերացոյ իբեանց մա-
տուցեր , որ զորովային օձին սա-
հեցման հողոյ մատնեցեր , զի
զտատապեալս մարմնոյ ոսկերս
իբր ՚ի դանձարանի պահեալ ,
կենաց յարութեան արժանա-
ցուսցես : Ա՛ղ ՚ի կնքելն զքա-
մին փականս կենդանակիր . քո
պերեզմանին՝ անդրէն յորսայս-
եալս զնոսին յանդունդս երկ-
րի սուզեցեր , զի ՚ի տապանա-
կի անձինս զնշխար լուսոյդ
հանդուսցես : Ա՛ղ ՚ի համբա-
ւելն զքեզ կորուսեալ , և իբր
զերկրաւորս մարմին զողացեալ ,

համայնակինչ և ամենատուր
զսերմն ծննդոցն կրճատեցեր ,
զի զիս զանարժանս յիշատակի
ընտրութեան բարեաց՝ անկո-
րուստ և անվհատելի ընդ փըր-
կեցելոցն հաղորդեսցես : Ա՛Հ
յարծաթոյն կրկնակապէն կա-
շառագործ , որ՛ի գանձարա-
նէ հօր քումմ նուիրանայ քեզ
պրաւ մատնուէ և անարգուէ
մանաւորեցին՝ զուրացողացն
մոլեգնելոց , ըստ հին հարուա-
ծոց հանուայն Մովսեսու՝ ՚ի յար-
ձան քարի յեզանակեցեր , զի
զիս զվերնայեալս ՚ի հաստատու-
թեանց և ընդ իշխանութ մա-
հու վաճառեալս՝ արեամբ քո
փրկեալ , ՚ի հաստատութիւն

վիմիդ կառուսցես : Օրհնեալ
երկին , օրհնեալ վերատին , յա-
ւիտենից յաւիտենից .
ամէն :

ԱՂՕԹՔ ԱՒՐԴԻՆ ԱՍՏՈՒԾՈՑ

Ի ԲԱՆԻՑ

ՅՈՎՀԱՆՆՈՒ ԳԱՒՌՆԵՑԻՈՑՆ

Լսական քարի և ամենա-
կարօղ զօրութիւնն աստուած
յաւիտենական որ յայսմ աւուր
հրամայեցեր երկրի , և ե-
ղիցին անասունն և զաղջունն և ըս

պատանս ըստ ազգի, և չհանդուրժեալ քնութեամբ բարիդ՝ արարեր զմարդն ի հողոյ ի պատկեր և ի նմանութիւն արարչապետիդ սիրելւոյ, և կացուցեր տէր և իշխան ի վերայ ամենայն գոլորեցուանց քոց արարածոց, և զգուշացուցեր զնա կալ ի պատուիրանի քումմ, և վայելել զբարիսն զորս ետուր նմա ձրի և առանց փոխարինի ի քումմէ առատութենէ։

Եւ արդ տէր իմ և աստուած իմ, որ զնա հողս անարգութեան այսպիսի անկշռելի բարութեամբ բարդաւաճեցեր, եւ ինքնին հրապուրա-

նայ թ ընամէոյն կենայ անսայ-
եալ՝ պատուիրանայ կենարա-
րիդ հետեցի, և օտարացայ
՚ի նմանութենէ հաստողիդ ի-
մոյ աստուծոյ ։ Եղծի զգեղեց-
կութիւն կերպարանայ հոգ-
ւոյս ազգի ազգի անօրէնու-
թեամբ, և ոչ զարհուրեցայ ։
Պերճացուցեր զիս իմացական
մտօք խորհիլ ՚ի չարէն և ընտ-
րել զբարին. իսկ ես վարեալ
անմտութեամբ՝ յօժարեցայ ՚ի
չարիս ։ Ընդարձեր ՚ի նմանու-
թիւն աստուածութեանդ քո
անձնիշխան կամօք և ես ծա-
ռայ եղեալ կրից մարմնոյս՝ հա-
ւատարեցայ անասնոց անբա-
նից ։ Ծողմ զայս հրամանայ

քոյ՝ զոր եւտուր ինձ առաքնոյ
դեղնուլաւ զգնացս ասից իմոց
՚ի ճանապարհ ուղիղ երկնից
օթևանին և ես ընդ խաւար
գնացեալ անկայ ՚ի խորխորատ
անեղանելի վհի ։

Այլ դու մարդասէր և երկայնամիտ՝ մի խոպան բարկանար ինձ և մի ոխս պահեր յանիւխտն, զի ՚ի քեզ անկայ ես յարպանդէ, և դու ես առուած իմ և տէր ։ Զթա յիս ՚ի գործս ձեռաց քոց, և նոր ըստեաս վնանգարուեալ մեղաց պատկերս բարեփառութեան քո ՚ի ձեռն առաւածելէն շնորհաց քոց ։ Ա՛ուաւարեա զանձս մուսց իմոց ուղղել զշաւիղ

զըս ՚ի ձանապարհս օրինաց
քոց : Սանձակոծեա զերկրա-
քարշ բաղձանս և զանբան կը-
ցից բռնութիւն երկիւղիւդ
քով սրբով : Վաւեա զհոգի
իմ սիրով աստուածութեանդ
քո՝ մատուցանել պատարագ
օրհնութեան լսո հաճոյից
բարեբարութեան քո : Ա՛ի թո-
ղուր զիս ՚ի ձեռս թշնամւոյն
փրկութեան իմոյ , որ հան-
դերձեալ է արկանել զիս ՚ի խա-
ւարն արտաքին , այլ լեր այցե-
լու բարեգթութեամբ քով :
Ընկաւ բեկաւ զօրութիւն
իմ ՚ի մահաբեր հարուածոց
հակառակորդին , և մեջք իմ
կցեցան ՚ի հող ՚ի ծանրութե-

նէ բեռանցս մերոց. այլ զո-
ղորմած, յարո զբաղմամբ
անձն իմ, և զօրացո զիս ի ծա-
ռայելոյ զբարիս, և խոկալ ըզ
հրամանս օրինացդ քոց: Ա-
րաց ի ծառոյ անեղեայիդ վի-
շապին, և մահ անմեռ կայ
առաջի իմ յամենայն ժամ. զը-
նա չիս օրհնեալ և ամենո-
ղութեամբ և մատո ինձ զգեղեցիկ
ապաքինիչ երկնաձիր շնորհաց
քոց, զի կեցից և փառաւո-
րեցից զանձամբ մարդասիրու-
թիւն քո, այժմ և յանվախ-
ճան յաւիտեանս. ամէն:

Խաչ քո եղիցի մեզ ապա-
հէն աեր յիսուս, յորժամ ե-
լեխ վառօք հօր ընդ ամպս
լուսաւորս, յայնժամ մեք մի
սմաչեացուք յուսացեալքս ի
քեզ, այլ զօրութեամբ քով
մեծաւ բերկրեացուք ընդ ա-
ղ քումմէ որպէս զորդիս լու-
սոյ և զորդիս առնչեաւն։

Օգնեա մեզ աեր, օգնեա
մեզ աստուած փրկիչ մեր, վա-
աքն մեծի փառաց անուանդ
քո. աեր փրկեա զմեզ և քա-
ե զմեզս մեր վասն անուան ք
րոյ. պարապեալ պահեա
զան ի քեզ ապաւինեալս ընդ
հովանեաւ սէր և պատուակա
խաչի քո ի խաղաղութեան։

վրկեա յերևելի և յաներևոյթ
թշնամւոյն . արժանաւորեա
պահպանեամբ փառաւորել
զքեզ ընդ հօր և ընդ սրբոյ
հոգւոյդ այժմ և միշտ և յա-
ւիտեանս յաւիտենից .
ամէն :

Ձայր մեր որ յերկինս . եր 1 :
Օրհնեցից զտէր յամենայն
ժամ յամենայն ժամ օրհնու-
թիւն նորա ի բերան իմ :

ՀԱՒԱԹ ԱՒՈՒՐ

ՀԱՅՐԱՊԵՏԱՑ

Հայր մեր որ յերկինս. ել 1։
Տէր եթէ զբլթաւնս. ել 2։
Լայք առաւօտու ոգ. ել 3։

Քահանայք կո գգեցցին զարդարութիւն
եւ սուրբք կո ցնծացեն։

ՍԱՂՄՈՍ ԱՊԱՇԽԱՐՈՒԹԵԱՆ

Մնացուք ի յարկս նորա, երկիրպագցուք
ի տեղւոջ՝ ուր կացեալ են ոտք նորա։

Տէր լուր աղօթից իմոց,
ունկնդիր լիր խնդրուածոց իմոց

ճշմարտութեամբ քով։
Լսուր ինձ արդարութեամբ
քով և մի մոռաներ ի դատաս-
ման ընդ ծառայի քումմ, զի
ոչ արդարանայ առաջի քո ա-
մենայն կենդանի։
Ալածեաց թշնամին զանձն
իմ, խոնարհ արար յերկիր զկ
կեանս իմ, և նստոյց զիս ի
խաւարի որպէս մեռեալ յա-
ւիտենից։
Զանձրացաւ յիս հոգի իմ, և
սիրտ իմ խռովեցաւ յիս։
Յիշեցի զաւուրսն զառաջինս,
խորհեցայ յամենայն գործս
քո, յարարածս ձեռաց քոց
խորհեցայ, և համբարձի առ
քեզ զձեռս իմ։

Ընձն իմ որպէս երկիր ծարա-
ւիէ առ քեզ, վաղվաղակի լու-
ինձ տէր, զի նուաղեցաւ յի-
նէն հոգի իմ։

Մի դարձուցաներ զերեսս քո
յինէն, զի մի նմանիցիմ այնո-
ցիկ որ իջանեն ի գուբ։

Լսել արա ինձ առաւօտու
զողորմութիւնս քո, զի ես ի
քեզ տէր յուսացայ։

Ցոյց ինձ ճանապարհ յոր և
գնացից, զի առ քեզ տէր
համբարձի զանձն իմ։

Փրկեա զիս ի թշնամեացդ իմոց
տէր, զի զքեզ ապաւէն ինձ
արարի։

Ուսո՛ ինձ առնել զկամս քո զի
դու ես աստուածդ իմ։

Ձուդի քո բարի առաջնորդեա
ցկ ինձ ի յերկիր ուղիղ։
Ալան անուան քո տէր կե-
ցուացես զիս, արդարութ-
քով հանցես ի նեղութենէ
զանձն իմ։
Ողորմութեամբ քով սատակ-
եա զթշնամիս իմ և կորո զա-
մենայն նեղիչս անձին իմոյ զի
ես ծառայ քո եմ։

ՀԱՐԱԿԱՆ ԱՊԱՇԽԱՐՈՒԹԵԱՆ

Ըներևութից քննօղ պաղա-
նեայ, թժշկեա զհոգւոյ իմոյ
զհիւանդութիւնս և կեցո մի-
այն մարդասէր։ Որ երկայնա-

միտք ես առ ամենեսեան՝ ա-
ղաչեա անձին իմոյ բազմամե-
ղի և կեցո միայն մարդասէր :
Ամենաբաւական ողորմութիւնդ
ընդէ պարզեւեա ինձ յահա-
գին աւուրն զթողութիւն, և
կեցո միայն մարդասէր :

Անդք իմ բազումք են յոյժ,
ծանր են քան զաւազ ծովու,
քանզի քեզ միայնոյ մեղայ, ո-
ղորմեա ինձ աստուած : Նայ
ուր զդուռն ողորմութեան՝
որ ողբալով կարդամ առ քեզ,
քանզի քեզ միայնոյ մեղայ ո-
ղորմեա ինձ աստուած : Ընդ
յիս զթութիւնդ քո բա-
զումդ և մարդասէր, քան-

զի քեզ միայնոյ մեղայ ողորմեա
ինձ աստուած ։

Ողբայր զիս յորոգայթէ սատանայէն և յամենայն վտանգից ապրեցո և ողորմեա ։ Յանեղբևոյթ թշնամւոյն և ի դաղտնի նէր նեռից բանսարկուին պահեա և ողորմեա ։ Փրկեա զիս ի յանցանաց մեղաց իմոց , և նորոգեա զիս հոգւով գիտութեան և ողորմեա ։

ՄԱՂԹԱՆՔ ԱՌ ՍՈՒՐԲ ՀԱՅՐԱՊԵՏՍ

Պարծեսցին ի քեզ սիրելիք ա-

նուան քո. զի օրհնեացես
դու զարդարն :

Ընդառ ձշմարիտ աստուա-
ծային օրինաց, և հաստատու-
թիւն հաւատոյ ազգի մարդ-
կան տէր ոչ դրիդոր, ՚ի մայր
Թողական աթոռս քո հայցեա
ւան մեր ՚ի քրիստոսէ :
Որ քրիստոսանուէր կոչմամբն
ծաղեցար որպէս զարեգակն,
և լուսաւորեցեր զՀայաստան
աշխարհս աստուածգիտու-
թեամբ, անդադար բարեխօս-
եա ւան անձանց մերոց :

Ո՛ արժանահռա մահտուրա-
ժամ ՚ի ցասմանէ քում հրա-

մանի՝ բարձ ի մէնջ բարեխո-
սութեամբ և աղօթիւք սրբո-
բոյն յակոբայ, սէր առա-
ուած հարցն մերոց։

Որ առացեր ողորմութիւք
չինել զաշխարհս ի սկզբանէ,
ողորմեալ որդւոց արամայ՝ ե-
տուր յաղթէն արշակունեա
հալիւն ընտրեալ զտուրքն ներ-
սէս, աղօթիւք սորա ողորմեա
մեզ աստուած։

Որ հրաւիրեցեր զյաւաջա-
գոյն ընտրեալսն ի սկզբանէ
աշխարհի ի հարսանիսն ա-
նապական, կոչեալ յուրախու-
ն ընդ բազմեալսն յաւարտս

տին ՝ զաստուածպղծեցին . ա-
ղաչանօք սորա կեցո զնա վա-
ռաց Թագաւոր :

Ար անապական բանին քա-
րոզ կոչեցար բերան ոսկի . յոր-
մէ աղբիւր կենաց հոսեալ ար-
բուցանելով քառավտակ բըն-
տանեաւքդ հանուր տիեզերս ,
մաղթեա փրկողին զԹողու-
թիւն մեղաց իմոց :

Ուսուցչապետ խոհասիւք ,
լոյս եղեալ աշխարհի համաճա-
պօղ գոլով՝ լուսաւորեաց զե-
կեղեցի տաստուածային բանիւ
երանելին բասիլիոս . մաղթա-
նօք սորա խնդրեմ զԹողու-
թիւն մեղացս :

Ար լուսով աստուածային

բանին զարդարեցեր զեկեղեցի, և զվաստարն անդիտութեան հալածեցեր յորդւոց մարդկան ով տէր սուրբ դրիդար բարեխօսեա վասն իմ առաքինածին բանն հօր։

Հայցան անմարմինքն՝ տեսանել զերանելին նիկողայոս, որ ի մարմնի վարս ըստացեալ անհամեմատ մարմնաւորաց. աղօթիւք սորա հայցեմ զթողութիւն մեզաց։

Ընդային ճառագայթ որ ի հօրէ մեզ ծագեցար, և լուսաւորէք զսիրեղերս ի ձեռն սուրբ հայրապետացն, աղօթիւք սոցա քրիստոս ողորմեա ինձ։

ի խորոց սրտից խօսք ընդ աստուծոյ։

ԲԱՆ ՀԱ։

Եւ քանզի երջանիկքն և վառաւորեալքն սէյն պարք, յորոց ամանք դոյզն ինչ գմեծցին և յաճախութիւնս հաւատոյ տեցան, փոքունս սատանեցան և մեծապոյն վառմամբ նշուլից հոգւոյն մաքրութեամբ լուսաւորեցան։ Յորոց մինն զպանդուածոյն յայտնէ զհաստատակամութիւնն, իսկ միւսն զերկրպագանցն քան զնութիւնն օրինս, վարս և առաքինութիւնս հրեշտակաց։

Եւ այդ նոքա՝ որ օրհնեալքն են յամենիշխանն քերանով աստուածաշունչ հօրն Աբրահամ. ընտրեալքն ասնեալքն խնկեալքն և բարեբանեալքն, իբրև զանդամս Քրիստոսի պաշտեցեալք, և իբրև զօմիեւանս հոգւոյն սրբոյ յարտաքեալք, յորս չիք ինչ նշմարանք և կամ դիւտք խաւարի, այլ ամենևին անկեղծութիւն, և լուսաւոր արդարութիւն, և ոչքան մարթ է զմարդն աստուծոյ՝ աստուծոյ նմանեցուցանել: Երեսք պարզք և անպատկառելիք, կրօնք բարձունք և անխոնարհելիք, կեանք զգաստ և անաստղա-

նելիք, պաշտօն առ ՚ած կարծր և անփոխարկելի, ընթացք ա-րիականք և անկասելիք, ճըշ-մարտութիւն միաստար և ան-ցընդելի, դիմադրաւութիւն զօրեղ և անհերքելի, տեսա-ւորութիւն պայծառ և ան-ապշելի, խնամատարութի վեր-նական և անկոխելի, պատկեր մաքուր և անաղարտելի: Օ՜ն-րոց կերտարանս և գիշատա-կաս անուանցն տալչել՝ աս-տուած իսկ վարդապետեաց, և նոքօք հաճութիւն ՚ի մէջ խը-ոսելութեան արարչիդ բան

լուսաւորեաց: . . . .

Ա՛յլ դու ինքն օրհնաբան-եալ անանձն Թագաւոր բարի

երկնաւոր մարդասէր Քրիս-
տոս, առաւծոյ կենդանւոյ մի-
ածին որդի, հզօր բարձրեալ
անքննին անճառ քաւիչ ահա-
ւոր, առատեա՛ ի ձեռն ամ-
բոխեալ ալեաց ոգւոյս ծփա-
նաց, արձանացս զծաւալս մո-
լեգին շարժման արտից խառ-
նուածեան, ընդոստնեա՛ ի սան-
ձըս կապոյ երասանաց ըմբռն-
ման զգնդեալ մոտաց վայրա-
պուտ։ Նզնոյ խաղաղուե՛ հզ-
րամանաւ մեծիդ ամենակարան
բերքոյս առատման, առատակեա
խաղանեա զբաղմապղեան
անդամս ուրուականս գաղտ-
նեաց ամօթոյս երկրակենցա-
ղըս հինից։ Պրեպես աղօ

մշտամոտյցս պայս նորընծայ
տաւ ողորմածդ թախծագին
ձայնի ողբերգարկուԹԵ այսր
մատենի: Ձան ՚ի խորոց մա-
հուս անդնդոց չքնաղ ապրե-
ցեալ ընդ մարդարէին վրկե-
լոյ. ընկալ զխոստովանուԹի
անձնապատաս բանիս ՚ի հոտ ա-
նուշից. չնորհեա վախԹար
դառնուԹեան վշտաց ուժգին
հեծուԹեան յուսահատելոյս:
Ու քեզ ընդ Հօր հոգեսփո-
փօքով վիտք պատիւ և իշխա-
նուԹիւն յաւիտեանս. ամէն:

ԱՂՕԹՔ ԱՒ ՀԱՅՐՆ ԵՐԿՆԱՒՈՐ

Ի ԲԱՆԻՑ

ՅՈՎՀԱՆՆՈՒ ԳԱՒՌԵՑԻՈՑՆ

Ընտրած ամենակալ՝ անբաւելի և անճառելի, անաշխատ բնութիւն և անսկզբնական զօրութիւն, որ յայսմ աւուր հանգեար յամենայն գործոց քոց ըստ արարեր, և օրհնեցեր և սրբեցեր զնա առ ամենիմաստ խորհրդով և կանխագիտութեամբ քով։

Ընդ՝ ես ծնանիցես մեզայ՝ անհեթալ կամ յախտ գառնապին ցաւոց հոգեկան վնասուց,

զոր ընդեաց յիս հոգին մահա-
ծին իշխանին խաւարի, և ոչ
գոյ ինձ հանդիստ ՚ի դժնդակ
տանջանացս: Այլ դու ամե-
նազօր, ապաքինեա զանբժշկե-
լի հիւանդութիւն հոգւոյս
աննահանջելի հրամանաւ քով,
և հանդո զիս յանհնարին տան-
ջանացս՝ որով հասեալ կամ ՚ի
գրուն մահու, զի ամենայնի
կարօղ ես և հզօր, և չիք քեզ
իր անհնարաւոր:

Սէր երկրաւորացս և բազ-
մանք հեշտալեաց դերեալ
դերեալ զմիտս իմ՝ չարաչար
վշոք ծառայեցուցանեն զիս
հանապազօր ՚ի գործս և ՚ի
անօրէնս, և ոչ երբեք առն գոյ

և դադար՝ ոչի առնուլ և խո-
հալ խորհել զերս ազատուե
յանտանելի կրից կարեաց,
և զառն աշխատութեանցս:

Ես ահա ալաչեմ զքեզ բա-
րեբար, որ վրկուԹիդ ես ա-
մենայնի և դիւրիչ վշտաց նե-
ղելոց, տուր ինձ զտանել ելս
ի տառապանաց աստի յաղա-
տութիւն մշանջենաւոր կենաց
և անանց հանգստեան, յոր-
մէ մերժեալ են ցաւք և հե-
ծութիւնք...

Տարակուսեալ վարանիմ
ևման բազմութե մեղաց իմոց,
յորժամ նկարեմ առաջի աչաց
սեաւութեան մտացս զդատաս-
տանն անողոք, զմերկասա-

բանող յանդիմանութիւն ամ
պարծող, զպատիժն առակալի մե-
ղաւորաց և անդարձից, զհու-
րըն անշէջ, զորդնն անմահ, և
զդատապարտութիւնն յաւի-
տենական:

Եւ քանզի մշ կարեմ ի-
մանալ զօրութեամբ Թօթա-
փել յանձնէ զբեռինս մե-
ղաց, և աղաւթիլ յարժանա-
հաս պատժոցս. վասն որոյ ան-
ձանր բեկեալ գոչեմ առ քեզ
մարդասէր. պարծակից լեր ինձ
՚ի պատնալ յեղս յանօրէնու-
թենէ գնացից իմոց՝ և դիմել
առ քեզ յամենայն զօրութե-
նէ և ՚ի մտաց, և արտասուաւ
զղջմամբ գտանել զԹողութի

և զինարհն . և ողորմութեամբ
քոյ արժանաւորիլ ընդ սու-
բըս քո միանձնեաւոր հանդըս-
տեան յարքայութեան քոմ
յերկինս , և ընդ նոսին վա-
ռաւորել անըռելի դոհաբա-
նութեամբ զամենազօր տե-
րութիւն քո յամենայն յաւի-
տեան . ամէն :

ԱՂՕԹՔ

Որ ընտրեցեր և ընկալար
զերանելի Հայրապետս քո Վՙ
առաւուած մեր , և հաղորդս ա-
րարեր զնոսա կամաւոր չար-
չարանաց քոց : Աղ՝ բարեխօս

առ քեզ ունիմք, որք առաւ և ընդ ամենայն սիեզերս սուրբք լցեն: Արդեօ զի աղօթիւքն նա- ցա և բարեխօսութքն խաղա- ղացուսցես զկենցաղավարու- թիւնս մեր, վրկեալ յերեւե- լի և յաներեւոյթ թշնամւոյն: Շնորհեա մեզ տէր լսել օրի- նակի նոցին կեալ, և զվախ- ճանն մեր կնքեա ուղղափառ խոստովանութեամբ ՚ի յայս կենացն յաւխտենից. զի և մեք արժանի եղիցուք մըտա- նել յերկնային խորանան լու- սոյ և ժառանգել զպատրաս- տեալն ՚ի սկզբանէ աշխարհի սրբոց քոց զարքայութիւնդ, և ընդ նոսին գոհանալով վա-

առաւօտեցուք զքեզ ընդ հօր
և ընդ սրբոյ հոգւոյդ, այժմ
և միշտ և յաւիտեան յաւի-
տենից. ամէն:

Հայր մեր որ յերկինս. եր 1:
Օրհնեցից զտէր յամ ժամ
յամ ժամ օրհնութիւն նորա
՚ի բերան իմ:

ԸՊՕԹՐ

ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԵԱՆ

ԵՒ

ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ



Նախ քան զխոստովանութիւնն:

Ի քեզ յուսացան հարքն մեր, յուսացան՝ ի քեզ և փրկեցեր զնոսա:

Ո՛ր քեզ աղաղակեցին և կեցին, ի քեզ յուսացան, և ոչ ամաչեցին:

Ա՛յլ ես որդն եմ և ոչ եմ մարդ նախատինք մարդկան և արհամարհանք ժողովրդոց:

Ո՛վ հեղս իմ ցուցից քեզ, և զաւրէնութիւնս իմ ոչ ծածկեցից ի քէն:

Տէր վրկեա զիս և բաւեա ըզ
մեզս իմ վասն անուան քո։
Օ՜ արթո զօրութիւնդ քո և եկ
՚ի կեցուցանել զիս։
Լուր ինձ արդարութեք քով
և մի մոռաներ ՚ի դատաստան
ընդ ծառայի քում, զի ոչ ար-
դարանայ առաջի քո ամենայն
կենդանի։
Ած քեզ տէր համբարձի զաչս
իմ, որ բնակեալդ ես ՚ի յեր-
կինս։
Արդէօ աչք ծառայի ՚ի ձեռն
տեառն իւրոյ, և որպէս աչք
աղախնոյ ՚ի ձեռն տիկնոջ
իւրոյ։
Այնպէս են աչք մեր առ քեզ
տէր աստուած մեր մինչև ո-

ղորմեացիս ՚ի վերայ մեր ։

Աղօրմեա մեզ տէր ողորմեա մեզ զի բազում լցաք արհամարհանաց ։

Աղօրմեա ինձ տէր զի նեղեալ եմ ես , խռովեցաւ ՚ի սրտմտութենէ աչն իմ անձն իմ և փոր իմ ։

Աղօրմեա ինձ աստուած , զի կոխեաց զիս մարդ , զօրհանաս զամէն պատերազմունք նեղեցին զիս ։

Աղօրմեա ինձ աստուած ողորմեա ինձ , զի ՚ի քեզ յուսացաւ անձն իմ ։

Աղօրմեա ինձ տէր , զի առ քեզ աղաղակեցի , ուրախ ա- րա զանձն ծառայի քո , զի առ-

քեզ տէր համբարձի զանձն
իմ ։

Աղաչեա՛ ինձ տէր և տես ըզ
խոնարհութիւն իմ՝ի թշնամ
եաց իմոց, ո՛ բարձր ազատել
զիս՝ի մահուանէ ։

Լո՛ւր ամուսած աղօթից իմոց
յաղաչել առ քեզ՝ յերկիւղէ
թշնամւոյն փրկեա զանձն իմ ։
Լո՛ւր ինձ ամուսած փրկիչ
իմ, յոյս ամենայն ծագաց
երկրի և ովք՝ի ծով հեռւ ։

Լո՛ւր ինձ տէր զի քաղցր է ո՞
ղորմութիւն քո, ըստ բազում
գթութեան քո հայեա յիս
և մի դարձուցաներ զերեսս
քո՝ի ծառայէ քումմէ ։

Լո՛ւր տէր ուղղութեան, և

նայեա ՚ի խնդրուածս իմ, ուն-
կընդէր աղօթից իմոց, զի առ
քեզ ամենայն մարմին եկեսցէ։
Լուր աչեր ձայնի խնդրուա-
ծից իմոց, յաղաչել ինձ առ
քեզ ՚ի հաւատոնալ ձեռաց
իմոց ՚ի տաճար սուրբ քո։
Լուր տէր աղօթից իմոց ուն-
կըն դէր խնդրուածոց իմոց,
արտասուաց իմոց մի լռեր։
Փրկեա ՚ի սուտ զանձն իմ, և
՚ի ձեռաց շանց զմիամօրուա-
թիւն իմ։
Փրկեա զիս ՚ի բերանոյ առիւ-
ծոյ, յեղջերց միեղջերուի ըզ
խոնարհութիւն իմ։
Փրկեա զիս յարենէ աստուած
աստուած փրկութեան իմոյ,

ցնծասցէ լեզու իմ յարդարու-
թեան քումմ։
Փրկեա զիս ՚ի թշնամեաց իմոց
աստուած, յայնցանէ որք յա-
րուցեալ են ՚ի վերայ իմ։
Փրկեա զիս յայնցանէ որ գոր-
ծեն զանօրէնութիւն, յարանց
արիւնահեղաց ապրեցո զիս։
Փրկեա զիս ՚ի խաւարէ և ՚ի
ստուերաց մահու, և խզեա
զկապանս իմ։
Տէր առաջի քո է ամենայն
ցանկութիւն իմ, և հեծու-
թիւն իմ ՚ի քէն ոչ ծածկե-
ցաւ։
Տէր մի սրտմտութեամբ քով
յանդիմաներ զիս, և մի բար-
կութեամբ քով խրատեր զիս։

Տէր լուր աղօթից իմոց, աղաղակ իմ առ քեզ եկեսցէ, և մի դարձուցաներ զերեսս քո յիւնեն։

Տէր կարդացի առ քեզ և լուր ինձ, նայեա՛ ի ձայն աղօթից իմոց ՚ի կարդալ իմում առ քեզ։

Տէր առաւաւած զօրութեանց ո՛նման է քեզ, հզօր ես դու ատէր, և ճշմարտութիւն շուրջ է զքեզ։

Տէր ատէր մեր զի՞ սքանչելի է անուն քո ՚ի վերայ ամենայն երկրի։

Տէր առաւաւած իմ՛ ի քեզ յուսացայ փրկեա զիս և յամենայն հալածչաց իմոց ապրեցո զիս։

Տէր աստուած մեր ստացիր զմեզ, զի բաց ի քէն զայլ ոք ոչ գիտեմք, և զանուն քո անուանեմք զօրհանապազ։

Աստուած դու ծանեար զանդիպումն իմ, և յանցանք իմ ի քէն ոչ ծածկեցան։

Աստուած զկեանս իմ պատմեցից քեզ, եդից զարտասուս իմ առաջի քո, որպէս խոտացար դու ինձ։

Աստուած ի բաղում ողորմութեան քում լուր ինձ, ի ճշմարտութեան փրկութեան քո։

Աստուած լուր աղօթից իմոց, ունկն դիր բանից բերանոյ

խմոյ։

Աստուած յանուանէ քուէ կէ-
տո զիս և ՚ի զօրութեան քուէ
իրաւ արա ինձ։

Աստուած ած իմ ես առ քեզ
առաւօտ առնեմ, ծարաւեաց
առ քեզ հոգի իմ, քանիպա-
տիկ ևս և մարմին իմ։

Աստուած զօրութենդ դարձ
հայեաց յերկինից և տես, այց
արա այգւոյս այսմիկ և դար-
մանն տար սմա, զոր սնկեաց
ակ քո։

Երդ ընդէր տրտում ես անձն
իմ, կամ ընդէր խռովես զիս.
յոյս ում աստուած խոստո-
վանեսցիմ, փրկիչ երեսաց իմ
իմոյ աստուած է։

Խոստովան եղէց քեզ ՚ի ժո-
ղովուրդս մեծ, և սաղմոս ա-
սացից քեզ յազգս։
Խոստովան եղէց մեռանել ըստ
արդարութեան քո և սաղմոս
ասացից անուան մեռանդ
բարձրելոյ՝։
Խոստովան եղէց քեզ յաւի-
տեան զի արարեր, և համբե-
րից անուան քում, զի քաղցր
է առաջի սրբոց քոց։
Խոստովան եղէց ա՛ռ քեզ
մեր աստուած իմ բոլորով
սրտիւ իմով փառաւոր արա-
րից զանուն քո յաւիտեան։
Խոստովան եղէց քեզ մեր բո-
լորով սրտիւ իմով, առաջի հր-
եշտակաց սաղմոս ասացից

քեզ ։

Խոտովան եղկոտք անուան քոմ մեծի, զի ահաւոր և սքէ, և պատիւ Թագաւորի զիբաւունս սիրէ ։

Տէր հան ’ի բանտէ զանձն իմ պահանամ զանուանէ քոմ մէ ։

ԱՂՕԹՔ ՄԱՆԱՍԷԻ ԹԱԳԱՒՈՐԻՆ

Տէր ամենակալ աստուած աբրահամու՝ իսահակայ՝ յակոբայ և զաւակի նոցա արդարոց. ամենակալ տէր լծող զմեզս իմ ։

Ով արարեր զերկինս՝ և զեր-
կիր, և զամենայն զարդ նոցա.
ամենակալ տէր Թող զմեզ
խմ։

Ով կապեցեր զծով բանիւ հր-
րամանի քո. փակեցեր զխորս,
ինքեցեր ահաւոր և փառա-
